

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Քնքուշ Հովիկի Մովսիսյանի Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Արդյունավետ հարկային համակարգը հիմնաքարային նշանակություն ունի ցանկացած պետության բնականոն գործունեության համար, առանց որի անհնարին կդառնա պետական կառույցների արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների բավարար ֆինանսավորումը: Հարկային համակարգի ձևավորման, բարենպաստ հարկային քաղաքականության իրականացման վերաբերյալ խնդիրները բոլոր ժամանակներում ու երկրներում շարունակում են մնալ տնտեսագետների, քաղաքական գործիչների, իրավաբանների, փորձագետների, փիլիսոփաների և այլոց ուշադրության կենտրոնում: Հարկային համակարգը գրեթե բոլոր երկրներում ժամանակակից պայմաններում ներառում է հարկերի տարբեր տեսակներ, որոնք ունեն ազգային և տարածքային առանձնահատկություններ: Հարկային համակարգը ներկայացնում է հարկերի այն ամբողջությունը, որոնք սահմանվում են օրենսդրությամբ, պետական մարմինների կողմից և կոչված է ապահովելու պետության ֆինանսական ռեսուրսների ձևավորման գործընթացը: Ինչպես յուրաքանչյուր համակարգի, այնպես էլ հարկային համակարգի գոյության և գործունեության առանցքային չափանիշն այդ համակարգը կազմող տարրերի միջև փոխկապվածության և ամբողջականության ապահովման, համակարգի առջև դրված խնդիրների լուծման ունակությունն է:

«Հ-ում հարկային բարեփոխումների իրականացման հիմնական նպատակը կարելի է ձևակերպել որպես եկամուտների անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով հարկման տարբեր բազաների նկատմամբ հարկային դրույքաչափերի ու հարկերի հաշվարկման այնպիսի մեխանիզմների սահմանում, որոնք նվազագույնի կհասցնեն տնտեսական համակողմանի զարգացման վրա հարկման խոչընդոտող ազդեցությունը՝ միաժամանակ հաշվի առնելով եկամուտների արդարացի բաշխման վերաբերյալ հասարակության պատկերացումները: Հարկման լավագույն համակարգի սահմանումը ենթադրում է բարեփոխումների ընթացքում հարկման տնտեսական արդյունավետության բարձրացման կարևորության գիտակցում, ինչի դրսևորումը, պետք է հանդիսանա հարկման լայն բազայի նկատմամբ սահմանային ցածր դրույքաչափերի սահմանումն ու դրանով իսկ հարկմամբ պայմանավորված տնտեսական խաթարումների նվազագույն մակարդակի ապահովումը: Այս ամենն էլ հարկային համակարգի բարեփոխման ու

զարգացմանն ուղղված միջոցառումները դարձնում են բարդ ու բազմաշերտ, ինչով էլ պայմանավորված է դրանց ուղղված խորքային վերլուծությունների պահանջը, որն էլ պայմանավորում է հետազոտության արդիականությունն ու նշանակությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ հարկային համակարգի զարգացմանն ուղղված միջոցառումների ու առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հարկերի գործառույթները և հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում,
- ուսումնասիրել հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը,
- բացահայտել ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները,
- բացահայտել ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները,
- ուսումնասիրել հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշները,
- գնահատել հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքները,
- մշակել հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ,
- հաշվարկել ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատել վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա,
- մշակել վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության առարկան և օբյեկտը, նպատակն ու խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորոյթները, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային համակարգի դերն ու նշանակությունը տնտեսական հարաբերությունների զարգացման գործում», գլխում ուսումնասիրվել են հարկային համակարգի էությունը, անդրադարձ է կատարվել հարկերի գործառույթներին,

հարկման նպատակներին, ներկայացվել է հարկային համակարգի դերը տնտեսության պետական կարգավորման գործում, ինչպես նաև ուսումնասիրվել է հարկային համակարգերի գործունեության միջազգային փորձը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ հարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները», գլխում շարադրվել են են ՀՀ հարկային համակարգի ձևավորման փուլերի առանձնահատկությունները՝ վեր հանելով դրանցից յուրաքանչյուրում առկա հիմնախնդիրները, ներկայացվել է ՀՀ-ում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ցածր մակարդակի պատճառները, ինչպես նաև անդրադարձ է կատարվել հանրապետությունում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման ցուցանիշներին:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները», գլխում հարկային վարչարարության կարողությունների գնահատման գործիքների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային վարչարարությունը, մշակվել է հարկային վարչարարության կատարելագործման նոր ուղիներ, հաշվարկվել է ՀՀ-ում ԱԱՀ-ի շեմի օպտիմալ մակարդակը և գնահատվել է վերջինիս ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա, մշակվել է վարձակալության պայմանագրերի կնքման և գրանցման գործընթացների պարզեցման նոր ընթացակարգեր:

Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը վերաբերում են ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր և կիրառելի ուղիների առաջադրմանը, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդների միջոցով գնահատվել է ՀՀ հարկային համակարգի արդյունավետությունը և մշակվել են առաջարկություններ ՀՀ-ում գործող հարկատեսակների, դրանց հարկման բազաների և շեմերի վերանայման ուղղությամբ:

2. Մշակվել են հարկային արտոնությունների տրամադրման և գնահատման մեթոդաբանական մոտեցումներ, առաջարկվել՝ արտոնությունների հիմնավորվածության աստիճանի գնահատման և մշտադիտարկման մեթոդաբանություն:

3. Հարկ վճարողների վարքագծային ուսումնասիրության հիման վրա մշակվել են հարկային վարչարարության կատարելագործման նոր մոտեցումներ՝ ուղղված հարկային պարտքերի ծավալների կրճատմանը, հարկման բազաների գնահատմանն ու հարկ վճարողների հաշվառմանը, մասնավորապես՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի գրանցման ընթացակարգերի պարզեցմանը:

4. ՀՀ հարկային համակարգի ինստիտուցիոնալ և մարդկային կարողությունների բարելավման նպատակով մշակվել են մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ և հարկային մարմնի աշխատողների մոտիվացիայի ու կարիերային առաջխաղացման արդյունավետ կառուցակարգեր:

Ատենախոսության արդյունքների գիտական և գործնական նշանակությունը

Հետազոտության տեսամեթոդական դրույթները, եզրակացություններն ու առաջարկությունները ունեն գիտական և գործնական նշանակություն և կարող են հիմք հանդիսանալ ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից հարկային վարչարարության և քաղաքականության կատարելագործմանն ուղղված միջոցառումների, ծրագրերի համալիր մշակման, վերջիններիս իրականացման, վերահսկողության գործընթացներում: Հետազոտության հիմնական եզրակացություններն ու առաջարկները գործնականում նախադրյալներ են ստեղծում հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկային արտոնությունների ոլորտում առկա խնդիրների լուծման, հարկային պարտքերի կրճատման, վարձակալության պայմանագրի հայտարարագրման համակարգի պարզեցմանն ուղղված հիմնախնդիրների արդյունավետ լուծման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէր թերություններից, և մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Հեղինակի կողմից կատարված գիտական նորույթ ներկայացվող մի շարք առաջարկների հետ կապված շարադրանքից հնարավոր չէ պատկերացում կազմել դրանց պատշաճ հիմնավորվածության մասին: Մասնավորապես, բացակայում է ԱԱՀ օպտիմալ հարկային բեռի հաշվարկի արդյունքում դրա շեմի մեծացման առաջարկի ազդեցությունը տնտեսության զարգացման վրա, գնահատված չեն հարկային ապառքների կրճատման քաղաքականության ուղղությունների, հարկային մարմնի մարդկային ռեսուրսների բարելավման, հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ընդլայնման, անշարժ գույքի վարձակալության հարկային կարգավորումների ու առաջարկվող քեշբեքի համակարգի ֆինանսական ազդեցությունները բյուջեյի եկամտային ու ծախսային հատվածների վրա:

2. Աշխատանքի որոշ պարագրաֆներ, մասնավորապես՝ պարագրաֆ 1.1-ը և 1.3-ը հիմնականում տեսական բնույթ ունեն: Հեղինակը դրանցում դիտարկում է հարկային համակարգի գործառույթների, խնդիրների ու դերի վերաբերյալ տեսական գրականության հիմնական մոտեցումները, որոնք դասագրքային ճշմարտություններ են, սակայն աշխատանքի հետագա շարադրանքից պարզ չէ թե դրանց հետագա կիրառումը աշխատանքի նպատակի, խնդիրների, նորույթների հիմնավորման մասով ինչ են տվել կամ ինչպես են օգտագործել որպես գիտական նորույթների հիմնավորման համար:

3. Պարագրաֆ 1.2-ում, որը վերաբերում է հարկային համակարգի ձևավորման առանձնահատկություններին, հեղինակը ոչ համակարգված կերպով դիտարկում է մի շարք երկրների հարկային համակարգերի որոշ զարգացումներ, առանձին հարկատեսակների կիրառման առանձնահատկություններ, առանց որևէ հիմնավորվածության և ընտրանքային դիտարկմամբ է կատարել հարկային մոտեցումների ուսումնասիրությունները որը հնարավորություն չի տալիս համեմատական վերլուծություն

կատարել: Պարագրաֆում իրականացված դիտարկումները ավելի կշահեին, եթե հեղինակը հստակեցներ դիտարկված երկրների շրջանակի ընտրության չափանիշները, դիտարկված բոլոր երկրների համար ուսումնասիրումն իրականացնելու ըստ նմանատիպ հարկատեսակների, վերլուծել << հետ նմանություններ ու տարբերությունները, ինչը թույլ կտար ավելի հիմնավոր գնահատել դրանց արդյունքները, դրանք կապել աշխատանքում տեղ գտած առաջարկների ու նորոյթների հիմնավորման հետ:

4. Պարագրաֆ 2.1-ը, որը վերաբերում է << հարկային համակարգի ձևավորման փուլերին, շարադրանքի տեսանկյունից նկարագրական է և հեղինակը չի առանձնացվում առանձին փուլերում առկա հիմնախնդիրները, զարգացմանը նպաստող կամ խոչընդոտող հիմնական գործոնները: 2.3 պարագրաֆը, որը վերաբերում է հարկային համակարգի արդյունավետության բարձրացման ինստիտուցիոնալ և իրավական կարգավորումներին, կրկին նկարագրական բնույթ ունի, և դրանում որևէ վերլուծություն իրավական համակարգերի զարգացումների ազդեցության գնահատման մասով չկա:

5. Պարագրաֆ 2.2-ի գծապատկեր 1-ը վերնագրված է «Հարկային համակարգի արդյունավետության գնահատման գործոնների համակարգ», սակայն գծապատկերում ընդամենը ներկայացված են հարկային համակարգի վրա ազդեցության ներքին և արտաքին մակարդակները՝ առանց ներկայացնելու այդ մակարդակներում ազդող հիմնական գործոնների շրջանակը: Նույն պարագրաֆի աղյուսակ 3 և 4-ում տարբեր երկրների ստվերային տնտեսության մակարդակի գնահատումը ներկայացվել է 2015 թվականի տվյալներով, մինչդեռ հետագա տասնամյակում թե համաշխարհային, թե ազգային մակարդակներում նշված երկրներում էական փոփոխություններ են եղել: Հետևաբար, 2015 թվականի ստվերի գնահատումը ներկա հարկային համակարգի արդյունավետություն գնահատման համար կիրառելը մեր կարծիքով արդյունավետ չի կարող լինել: Նույն կերպ 3.1 պարագրաֆում հեղինակը եղրահանգումներ է կատարում << հարկային մարմինների կարողությունների 2007 թվականին վերաբերող գնահատման արդյունքների հիման վրա: Այս ամենը կարող է էապես ազդել աշխատանքի արդյունքների արդիականության վրա:

6. Պարագրաֆ 2.2-ում << հարկային համակարգի արդյունավետության գնահատումը, պարագրաֆ 3.1-ում հարկային վարչարարության կարողությունների գնահատումը հեղինակի կողմից չեն կատարվել, կիրառված են միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված գնահատման արդյունքներ: Նման մոտեցումը ստացված արդյունքների ինքնուրույնության հարց կարող է առաջացնել: Մինչդեռ դրանց վերնագրերի, աշխատանքի խնդիրների, և նորոյթների շարադրանքն ու շեշտադրումները ենթադրում են հեղինակի կողմից նման գնահատումների իրականացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններով հանդերձ ատենախոսության արդյունքներն ունեն տեսական ու կիրառական նշանակություն:

Քնքուշ Հովհիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը կարելի է գնահատել որպես արժեքավոր գիտական հետազոտություն հարկային համակարգի արդյունավետության բարձրացման և հիմնախնդիրների լուծման տեսանկյունից: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Քնքուշ Հովհիկի Մովսիսյանի «Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

Հայաստանի պետական տնտեսագիտական

համալսարանի «Ֆինանսներ» ամբիոնի

դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու՝

Է. Վ. Աղաբեկյան

16.08.2024 թ.

Է. Վ. Աղաբեկյանի ստորագրության

իսկությունը հաստատում եմ

ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Թ. Մ. Մկրտչյան

16.08.2024 թ.

